

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ  
ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՀՀ ԼՍՎՔ ԳՀԱՊՁԲ-21/11-1»

ք. Վանաձոր

«02» 02 2021 թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ասլանյան -ի, որը գործում է համայնքապետարան-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆանատասիկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Անահիտ Հարությունյան-ի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ էլնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2262127(երկու միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ:<sup>18</sup> Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

<sup>18</sup> Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2<sup>19</sup>

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

#### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2<sup>20</sup>

#### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը

<sup>19</sup> Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հարկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

<sup>20</sup> Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից

<sup>21</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված սույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է սույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

22

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևերի փոփոխությանը, կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6<sup>23</sup>

8.7<sup>24</sup>

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

<sup>22</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

<sup>23</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>24</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարող գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>25</sup>

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

Վանաձորի համայնքապետարան  
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22  
Կենտրոնական գանձապետարան  
ՀՀ 900232351024  
ՀՎՀՀ 06901936

\_\_\_\_\_  
/ստորագրություն/  
Կ.Տ

Ս.Ալանյան

ՎԱՃԱՌՈՂ

«Ճանտաստիկ» ՍՊԸ  
Ք: Վանաձոր, Տիգրան Մեծի 38/1  
«ՎՏԲ-Հայաստան բանկ»ՓԲԸ  
ՀՀ 16093015357400  
ՀՎՀՀ 06945424

\_\_\_\_\_  
/ստորագրություն/  
Կ.Տ

Ս. Հարությունյան

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

<sup>25</sup> Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի փաստապարհից, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փոփոխված ձևով ներկայացված օրակազմում և պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև երր ասպահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
2	30192133/50 1	Սրիչ	Xelon, Xelon Co, Pancel box, Xelon Co., Ltd	Մատիտ սրելու համար, երկանցք, երկաթյա իրանով և լեզվակով:	հատ	65	2600	40	Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22/Վանաձորի համայնքապետարան, ՔԿԱԳ Վանաձորի տարածքային բաժին/, ք. Վանաձոր, Լժդեհի 14/Վանաձորի ՍՍՎՏԲ/	40	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև համաձայնագրի կնքման պահից 25.12.2021թ.
3	30197220/50 1	Ամրակ 1	Xelon, Xelon Co, Clip 33mm, Xelon Co., Ltd	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական, գունավոր վիճակային ծածկույթով, 33 մմ: Տուփի մեջ 100 հատ:	հատ	0.7	7000	10000			
4	30197220/50 2	ամրակ 2	Xelon, Xelon Co, Clip 50mm, Xelon Co., Ltd	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական ոսկեգույն ծածկույթով, 50 մմ: Թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար: Պլաստմասե թափանցիկ տուփով: Տուփի մեջ 100 հատ:	հատ	1.4	50400	36000			
5	30192121/50 1	Գրիչ 1	Yalong, Yalong Stationery Co., Ltd, Gelpen, Yalong Stationery Co., Ltd	Գրիչ գելային սեղանին ամրացնելու հարմարանքով՝ զսպանակով, թափանցիկ իրանով:	հատ	135	38475	285			
6	30192121/50 2	Գրիչ 2	LVS, LVS KTD,	Գրիչ ոռլլեր, գնդիկը-կարբիդ, վոլֆրամ, տրամագիծը 0,7մմ,	հատ	245	11760	48			

			Pen, LVS KTD	կորպուսը պլաստիկ, անվտանգ ծայրադիր, գույնը սև, կանաչ, կարմիր						
9	30192700/50 1	Գրչաման	Yalong, Yalong Stationery Co., Ltd, Grand Yalong Stationery Co., Ltd	Կանաչ և սպիտակ գույների գրչաման պլաստմասե, 360°պտտվող իր առանցքի շուրջը, 3-ից ոչ պակաս բացվող հատվածով՝ նախատեսված ամրակների, կոճգամների տեղադրման համար:	հաստ	490	7350	15		15
10	30192700/50 2	Գրառումն երի գիրք 1	Guangbo, Guangbo LTD, Guangbo, Guangbo LTD	Գիրք, A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունը ոչ պակաս քան 85%, խտությունը 65-70գ/ք.մ.ն կողմնային մասում նշված էջերի քանակը 150 թերթ(3QR), կոշտ կապույտ կազմով:	հաստ	950	76000	80		80
11	30192700/50 3	Գրառումն երի գիրք 2	Guangbo, Guangbo LTD, Guangbo, Guangbo LTD	Գիրք, A4 ձևաչափի (210X297 մմ) սպիտակությունը ոչ պակաս քան 85%, խտությունը 65-70գ/ք.մ.ն կողմնային մասում նշված էջերի քանակը 200 թերթ(4QR), կոշտ կապույտ կազմով:	հաստ	1150	43700	38		38
12	30197332/50 1	Դակիչ 1	<Стамм>, ООО<Стамм>, Дыракол, ООО<Стамм>	Դակիչ մետաղական իրանով, 4 անցքի հնարավորությամբ, մինչև 30 թերթ դակելու համար, շարժական քանոնով :	հաստ	1420	12780	9		9
13	30197331/50 1	Դակիչ 2	Стамм>, ООО<Стамм>, Дыракол,	Դակիչ մետաղական իրանով, նախատեսված մինչև 60թ դակելու համար, շարժական	հաստ	3750	30000	8		8

			ՕՕՕ<Տրամմ>	քանոնով, անցքերի հեռավորությունը 6 սմ:						
14	39241141/50 1	Դանակ 1	Yalong, Yalong Stationery Co., Ltd office knife, Yalong Stationery Co., Ltd	Դանակ գրասենյակային, սայրի լայնությունը 18սմ, պատյանը երկաթից:	հաստ	129	3870	30		30
15	39241141/50 2	Դանակ 2	Yalong, Yalong Stationery Co., Ltd office knife, Yalong Stationery Co., Ltd	Դանակ գրասենյակային, 9սմ x 80սմ, պատյանը մետաղյա՝ ձեռքը ֆիքսող ռետինե փաթույթով, սայրը ֆիքսող երկաթե պտուտակով, ծայրոցը մետաղական, գույնը սև:	հաստ	80	1600	20		20
16	30192700/50 4	Դիսպենսե ր	Yalong, Yalong Stationery Co., Ltd Dispenser, Yalong Stationery Co., Ltd	Տակդիր նախատեսված 36սմ լայնությամբ սկոչի համար: Ընդգծիչ (մարկեր), ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից պատրաստված, շեղ- տափակ ծայրով, տուփում 6 գույն:	հաստ	295	4425	15		15
17	30192125/50 1	Ընդգծիչ 1	Yalong Stationery Co. Yalong Stationery Co., Ltd HIGHLIGHTER Marker	Ընդգծիչ (մարկեր), ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից պատրաստված, շեղ- տափակ ծայրով, տուփում 6 գույն:	հաստ	72	12960	180		180
18	30192125/50 2	Ընդգծիչ 2	Yalong Yalong Stationery Co., Ltd HIGHLIGHTER Yalong Stationery Co., Ltd	Տեքստընդգծիչ (մարկեր), զելային, ոսկային հիմքով, ֆլյուրիսցենտ գույների, առանց հոտի: Չի թափանցում թղթի միջով, միջուկը դուրս է բերվում մեխանիկական շարժման միջոցով	հաստ	155	17050	110		110
20	30192740/50 1	Գունավոր տպագրու թյան թուղթ 1	Expert, Xuango LTD, Expert, Xuango LTD	A4 ֆորմատի, տեսակը սուպերգլյանց, լազերային տպագրության համար, միակողմանի փայլուն, խտությունը 250գ/մ2, տուփի մեջ 100	կգ	2505.9 67	15537	6,2		6,2

				հատ, գույնը սպիտակ, չափեր 210x297մմ, լրագրային տպիչներով տպագրության համար,							
21	30192740/50 2	Գունավոր տպագրության թուղթ 2	Xerox, Xerox LTD, Colotech Color Laser Paper, Xerox LTD	Երկկողմանի շիթային տպագրության ունիվերսալ թուղթ, երկկողմի փայլով, 280գ/մ2, 210*297մմ, տուփում 100 թերթ:	կգ	2006	14042	7		7	
23	30197646/50 1	Թուղթ 2	Ballet , International Paper Company , Ballet A4, International Paper Company	A4 չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80գ/մ2, A3 չափի (297x420)մմ: Մեկ տուփի մեջ թերթերի քանակը գործարանային փաթեթավորմամբ՝ 500 թերթ, պետք է համապատասխանի ISO 9001, 14001, OHSAS 18001	կգ	538	112980	210		210	
24	30199130/50 1	Թուղթ 3	Ballet , International Paper Company , Ballet A3, International Paper Company	Կակա թուղթ (մոմաթուղթ-մատրիցա): Նտությունը 41գ/քառ.մ, թափանցիկությունը 45%, սեփական խոնավությունը 6%: Պատրաստված գլանափաթեթներով: Գլանափաթեթի չափերը 41մ, լայնությունը 878մմ: ԳՕՍՍ 892-89:	կգ	1497.9 66	8838	5,9		5,9	
25	30194320/50 1	Թուղթ 4	Госзнак , Госзнак НПО, Калька,	Թուղթ զծագրական (վատման): Թուղթ А մակնիշի (մատիտով, տուշով և ջրաներկով զծագրաֆիկական	կգ	620	78120	126		126	

			Госзнак НПО	աշխատանք կատարելու համար), 1մ2 մակերեսով թղթի զանվածք՝ 180գ, լիստերով Չափը 700մմ*1000մմ: Տուփում 100հ							
26	30197623/50 1	Թուղթ 5	Госзнак , Госзнак НПО, Чертежная бумага, Госзнак НПО	Թուղթ միլիմետրովկա, А3 ֆորմատի: Չափերը՝ 297X420մմ :Տուփի մեջ 50 հատ:	կգ	1950	7800	4		4	
27	30197623/50 2	Թուղթ 6	<PAPERLINE>, <PAPERLINE> LTD, Pad papers А3, <PAPERLINE> LTD	Թուղթ միլիմետրովկա А2 ֆորմատի: Չափերը 420×594: Տուփի մեջ 50 հատ: <PAPERLINE>	կգ	3000	15000	5		5	
28	30197233/50 1	թղթապանակ 1	<PAPERLINE>, <PAPERLINE> LTD, Pad papers А3, <PAPERLINE> LTD	Թղթապանակ՝ կավճած սովորաբար թից, А4 չափի փաստաթղթերի համար, թելակապերով: Խտությունը՝ 300գ/ք.մ:	հատ	40	24000	600		600	
29	30197232/50 1	թղթապանակ 2	Կռունկ, ԿՌՈՒՆԿ ՍՊԸ, Թղթապանակ թելերով, ԿՌՈՒՆԿ ՍՊԸ	Արագակար՝ կավճած սովորաբար թից, А4 չափի փաստաթղթերի համար, ամրացման մետաղական հարմարանքով: Խտությունը՝ 280գ/ք.մ:	հատ	40	32000	800		800	
30	30197230/50 1	թղթապանակ 3	Կռունկ, ԿՌՈՒՆԿ ՍՊԸ, Թղթապանակ թելերով, ԿՌՈՒՆԿ ՍՊԸ	Արագակար՝ պլաստիկ, ներսից գրպանով հաստությունը ոչ պակաս 200մկ А4 չափի փաստաթղթերի համար, ամրացման մետաղական զսպանակով:	հատ	80	24000	300		300	
31	30197230/50 2	թղթապանակ 4	Yalong, Yalong Stationery Co., Ltd, Attache Selection, Yalong	Թղթապանակ երկու կոճգամով, А4 ֆորմատի, անթափանց տարբեր գույների, հաստ պոլիպրոպիլենից (հաստությունը նվազագույնը 250մկ) պատրաստված, երեսին	հատ	150	60000	400		400	

			Stationery Co., Ltd	անվանաքարտի տեղով:							
32	30197230/50 3	թղթապանակ 5	Ghinhu, Ghinhu LTD, Clear bag, Ghinhu LTD	Թղթապանակ կոճակով, A4 ֆորմատի, անթափանց տարբեր գույներ:	հաստ	48	9600	200		200	
34	30197230/50 5	թղթապանակ 7	<СТАММ>, ООО<СТАММ>, Портфель кейс, ООО<СТАММ>	Թղթապանակ պլաստիկ բռնակով, ներքին 6 բաժանումով, փականով, լայնությունը՝ 40 սմ, A4 ֆորմատի:	հաստ	840	75600	90		90	
35	30197230/50 6	թղթապանակ 8	Ghinhu Ghinhu LTD folder 100 files Ghinhu LTD	Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 100 թափանցիկ հաստ ֆայլերով:	հաստ	550	44000	80		80	
